ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

EU4Business նախաձեռնություն (Փուլ III)



Իրականացման ժամանակահատված: 03.05.2023 - 02.05.2027

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 3 094 052

Ընդհանուր բյուջե: € 3 094 052

Իրականացնող կազմակերպություն(ներ):

GOPA

Նախագծի կայքէջ: eu4business.eu

Նախագծի նկարագրություն:

EU4Business նախաձեռնությունը նպաստում է Արևելյան գործընկերության երկրներում Տնտեսական և ներդրումային ծրագրի իրականացմանը և այդպիսով աջակցում է տարածաշրջանում կայուն ու ներառական տնտեսական աճին:
Ծրագիրը ապահովում է մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված ԵՄ բոլոր նախագծերի կանոնավոր և համապարփակ մշտադիտարկումը Արևելյան գործընկերության տարածաշրջանում, գնահատում է EU4Business-ի տարածաշրջանային և երկկողմ նախագծերի ազդեցությունն ու արդյունքները, ինչպես նաև բարձրացնում է ԵՄ աջակցության տեսանելիությունն ու հասանելիությունը:

Ակնկալվող արդյունքներ:

1. Կանոնավոր վերլուծական զեկույցների հրապարակում՝ երկկողմ և տարածաշրջանային մասնավոր հատվածի աջակցության ծրագրերի և նախագծերի, ինչպես նաև դրանց ազդեցության վերաբերյալ: Զեկույցները կներառեն նաև վերջերս մեկնարկած EFSD և EFSD+ երաշխիքներով և համաֆինանսավորման գործիքներով աջակցվող գործողությունները:
2. Բարելավված հաղորդակցություն և հասանելիություն պոտենցիալ շահառուներին՝ ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրերի ազդեցությունն առավելագույնի հասցնելու նպատակով, հատկապես խոցելի և անբավարար սպասարկվող խմբերի համար:
3. ԵՄ դիրքի ամրապնդում որպես մասնավոր հատվածի աջակցության առանցքային գործընկեր, ինչպես նաև EU4Business նախաձեռնության բրենդի ճանաչելիության բարձրացում Արևելյան գործընկերության տարածքում, մասնավորապես ՓՄՁ-ների և գործընկեր կառավարությունների շրջանում: EU4Business նախաձեռնության և դրա շրջանակում իրականացվող նախագծերի տեսանելիությունը կուժեղացվի գործարար համայնքում:
4. Աջակցություն տարածաշրջանում ԵՄ աջակցությամբ մշակված Խելացի մասնագիտացման ռազմավարությունների իրականացմանը: